ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/137/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **15 հուլիսի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Եփրեմ Կարապետյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի հուլիսի 15-ին ընդունելով «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՑԱՑ» կուսակցության (այսուհետ նաև՝ Կուսակցություն) մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Տիգրան Գրիշայի Արզումանցյանի կողմից Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը (այսուհետ նաև՝ Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/137/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I. Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթները, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ կուսակցությունների մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամների՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագրերն Օրենքով սահմանված ժամկետում

ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքներով պարզել է, որ Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Տիգրան Արզաֆանցյանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի ապրիլի 3-ին և 9-ին թիվ 01/890/59-2026 գրությունը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ պաշտոնական էլեկտրոնային փոստով, ինչպես նաև հայտարարագրման էլեկտրոնային համակարգում գրանցված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվել է Տիգրան Արզաֆանցյանին՝ տեղեկացնելով Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Տիգրան Արզաֆանցյանը ծանուցվել է նաև, որ Հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 17:00-ին, ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը Տիգրան Արզաֆանցյանի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, և հիշյալ ժամկետում չի ներկայացվել Հայտարարագիրը՝ ծանուցումը 2026 թվականի ապրիլի 16-ին փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով ուղարկվել է Տիգրան Արզաֆանցյանի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով: Նշված ծանուցումը Տիգրան Արզաֆանցյանը ստացել է 2026 թվականի մայիսի 18-ին (հիմք՝ [redacted] հետադարձ ծանուցում): Սակայն, ծանուցված համարվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Տիգրան Արզաֆանցյանի կողմից Հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

1.3 Պատշաճ ծանուցված Տիգրան Արզաֆանցյանի բացակայությամբ 2026 թվականի հունիսի 18-ին կազմվել է թիվ 151/26 ՎԻՎ արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունիսի 26-ի՝ թիվ 01/1898/1-2026 գրությամբ Տիգրան Արզաֆանցյանին ծանուցում է ուղարկվել, որ վերոհիշյալ առերևույթ իրավախախտման հիման վրա 2026 թվականի հուլիսի 15-ին՝ ժամը՝ 15:15-ին, իրականացվելու է գործի քննություն:

1.5 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծանուցումը ուղարկելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի կարգավորումները՝, 2026 թվականի հուլիսի 9-ին նշված ծանուցումը տեղադրել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների

պաշտոնական ինտերնետային կայքում (www.azdarar.am), որից հետո հինգերորդ օրը՝ 2026 թվականի հուլիսի 14-ին, նշված ծանուցումը համարվել է հանձնված (ստացված):

1.6 Բացի այդ՝ 2026 թվականի հուլիսի 8-ին Տիգրան Արզաքանցյանի անձնական բջջային [redacted] հեռախոսահամարին (WhatsApp բջջային հավելվածի միջոցով) ձայնային հաղորդագրություն է ուղարկվել՝ վերջինիս տեղեկացնելով գործի քննության տեղի և ժամանակի մասին: Միաժամանակ հետադարձ կապն ապահովելու նպատակով տրամադրվել են նաև երկու հեռախոսահամարներ, սակայն վերջինս կապ չի հաստատել Հանձնաժողովի հետ:

1.7 Գործի քննության տեղի և ժամի մասին պատշաճ ծանուցված Տիգրան Արզաքանցյանի բացակայությամբ 2026 թվականի հուլիսի 15-ին տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Տիգրան Արզաքանցյանի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ ՎԻՎ/137/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում, որ՝

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Տիգրան Արզաքանցյանը 2023 թվականի հունվարի 17-ից մինչ օրս հանդիսանում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ:

3.2 «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՅԱՑ» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Տիգրան Արզաքանցյանը Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսացել է հայտարարատու պաշտոնատար անձ:

3.3 Տիգրան Արզաքանցյանի կողմից Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

3.4 Գործի քննության օրվա դրությամբ Տիգրան Արզաքանցյանի կողմից Հայտարարագիրը չի ներկայացվել Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները,** իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր (...):

4.2 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև **տարեկան** հայտարարագրեր:

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, (...):

4.4 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Նշված անձինք պաշտոնավարման ընթացքում **տարեկան հայտարարագրերը ներկայացնում են մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա մայիսի 31-ը:**

4.5 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով նախատեսված հայտարարագրերը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.9 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.10 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.11 Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.12 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին: Գործի վարույթը կարճելու մասին որոշում ընդունվում է նաև բանավոր դիտողություն հայտարարելու դեպքում:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Տիգրան Արզաքանցյանը, Սահմանադրական օրենքի իմաստով հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, կրել է Հայտարարագիրը Հանձնաժողով ներկայացնելու պարտականություն, սակայն Օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա Հայտարարագիրը Հանձնաժողով չի ներկայացրել, այն է՝ թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանք:

Հանձնաժողովը գտնում է, որ խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել՝ արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը: Տվյալ դեպքում պարզվել է, որ Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Տիգրան Արզաքանցյանը 2023 թվականի հունվարի 17-ից մինչ օրս հանդիսանում է Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ, հետևաբար՝ Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 2-ին մասի համաձայն հանդիսացել է Հանձնաժողով Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող պաշտոնատար անձ:

Արարքի որակական կողմը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել՝ արդյո՞ք արարքը կարող է պարունակել Օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ և այնպիսի էական վնաս է պատճառել ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը կդիտարկվի համաչափ:

Սույն դեպքում՝ օրենսդրի կողմից սահմանված պահանջների կատարումը նպատակ ունի ապահովել Կուսակցությունների գործունեության թափանցիկության ամբողջականությունը և բացառելու կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի առանձին անդամներին ֆինանսավորելու միջոցով կամ նրանց անունով գույքի ձեռակերպման միջոցով կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ առկա իրավակարգավորումները շրջանցելը՝ այդպիսով ապահովելով կուսակցությունների գործունեության ֆինանսական թափանցիկությունը և վերջիններիս անկախությունը մասնավոր շահերից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ «ՈՒԺԸ ՀԱՅՐԵՆՑԱՑ» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Տիգրան Արզաքանցյանը ենթակա է վարչական պատասխանատվության Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված զանցանքի համար:

Ընդ որում, Տիգրան Արզաքանցյանը մինչև գործի քննության օրը չի ներկայացրել Հայտարարագիրը, ինչի արդյունքում Հանձնաժողովը գտնում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի դրույթներով պաշտպանվող իրավահարաբերությունների էությունը շարունակում է մնալ խաթարված:

Հանձնաժողովն արձանագրում է, որ սույն գործով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթով առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող, ինչպես նաև Օրենսգրքի 34-րդ հոդվածով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:

Հաշվի առնելով վերոգրյալ փաստական հանգամանքները, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով, 282-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 283-րդ հոդվածով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով

սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Տիգրան Գրիշայի Արզաքանցյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ (տուգանք) սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ ***200,000 ՀՀ դրամի չափով:***

2. Տուգանքը պետք է վճարվի գանձապետական ***900005001335*** «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» ***հաշվեհամարին*** վճարման անդորրագրի **«նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տիգրան Գրիշայի Արզաքանցյանին այն սահմանված կարգով հանձնելուն (հանձնված համարվելուն) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ